



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

«03» նոյեմբերի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 49-Ա/Ք

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՀՈՐԻՉՈՆ-2020» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԶԵՎԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով 2016 թվականի մայիսի 19-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև «Հորիզոն-2020» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» միության ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագրի դրույթներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) Եվրոպական Միության «Հորիզոն-2020» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրի ծրագրային կոմիտեների անդամների գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Եվրոպական Միության «Հորիզոն-2020» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրի ծրագրային կոմիտեների անդամների գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման հանձնարարության պայմանագրի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԳ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՀՈՐԻՉՈՆ-2020» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույն կարգով սահմանվում են Եվրոպական Միության «Հորիզոն-2020» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրի ծրագրային կոմիտեների (այսուհետև՝ Ծրագրային կոմիտե) անդամների, բացառությամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համակարգից ընդգրկվածների, կոմիտեների հանդիպումներին մասնակցության համար գործուղելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) կողմից ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանները:

1. Կոմիտեն Ծրագրային կոմիտեների անդամներին ֆինանսական աջակցություն կարող է տրամադրել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծախսային ծրագրի «Համակարգի գիտական գործուղումներ» ենթածրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցներից՝ Ծրագրային կոմիտեների հանդիպումներին մասնակցության համար:

2. Կոմիտեն ֆինանսական աջակցություն կարող է տրամադրել Ծրագրային կոմիտեի նիստի մասնակցության օրապահիկի, գիշերավարձի և տրանսպորտային ծախսերը հոգալու համար:

3. Մասնակցության հրավերը ստանալուց հետո, ոչ ուշ, քան Ծրագրային կոմիտեի նիստը սկսվելու օրվանից տասը օր առաջ, Ծրագրային կոմիտեի անդամը ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով դիմում է Կոմիտե՝ հիմնավորելով տվյալ

միջոցառմանը մասնակցելու անհրաժեշտությունը, կից ներկայացնելով կազմակերպչի հրավերը:

4. Ծրագրային կոմիտեի անդամի ֆինանսական աջակցության վերաբերյալ դիմումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեն որոշում է կայացնում նիստի մասնակցության վերաբերյալ և բանավոր տեղեկացնում է Ծրագրային կոմիտեի անդամին:

5. Կոմիտեի դրական որոշման պարագայում Կոմիտեի և Ծրագրային կոմիտեի անդամի միջև կնքվում է համապատասխան պայմանագիր (Հավելված 2):

6. Վերադարձից հետո Ծրագրային կոմիտեի անդամը երեք աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտե է ներկայացնում միջոցառման մասնակցության հաշվետվությունը, գիշերավարձը հաստատող փաստաթղթի և ուղևորի նստեցման կտրոնների պատճենները:

7. Ծրագրային կոմիտեի անդամի գործուղման օրապահիկի և գիշերավարձի փոխհատուցումը կատարվում է համաձայն 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի:

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր № _____

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՀՈՐԻՉՈՆ-2020» ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

ք. Երևան

«___» _____ 20.. թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանի (այսուհետ՝ Կոմիտե), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հորիզոն-2020» Ծրագրային կոմիտեի անդամ _____-ը,

(անունը, ազգանունը, հայրանունը, կազմակերպության անվանումը)

համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի № 450-րդ հոդվածի, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով Կոմիտեն ՀՀ 20.. թվականի պետական բյուջեով նախատեսված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծախսային ծրագրի «Համակարգի գիտական գործուղումներ» ենթածրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցներից ----- ՀՀ դրամ է տրամադրում ----- ին

(պաշտոն, անուն, ազգանուն)

(գործուղման ժամկետներ, երկիր, քաղաք, միջոցառման անվանում) մասնակցելու համար:

2. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը (տրամադրվող ֆինանսական միջոցների չափը) կազմում է _____ ՀՀ դրամ:

(թվերով և բառերով)

3. Պայմանագրի կատարման ժամկետը

3.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և դադարում է գործուղված անձի հաշվետվության ու դրան կից փաստաթղթերի ներկայացմամբ:

3.2 Պայմանագիրը կարող է վաղաժամ լուծվել գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3 Կոմիտեն ֆինանսական միջոցները փոխանցում է Ծրագրային կոմիտեի անդամի բանկային հաշվեհամարին՝ Պայմանագիրը կնքելու օրվանից 20 (քսան) օրվա ընթացքում:

4. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

Կողմերն ունեն Կոմիտեի նախագահի 2018 թվականի -----ի N -Ա/Ք հրամանով հաստատված «Եվրոպական Միության «Հորիզոն-2020» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրի Ծրագրային կոմիտեի անդամների գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման» կարգով նախատեսված իրավունքներ և պարտավորություններ:

5. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. Այլ պայմաններ

Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

ԿՈՄԻՏԵ

ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22

Հ/Հ 900011033033

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Գլխավոր քարտուղար՝ _____

ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ

(բնակության հասցեն)

(բանկային հաշվեհամարը, բանկի անվանումը)

(անձնագրի տվյալներ՝ համարը, տրված ում կողմից, վավերականության ժամկետը)

(սոցիալական քարտի համարը)

Կ.Տ.